



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

« 01 » 04 2018 թ.

No 06/32/16416-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 15.02.2018թ.

թիվ Պ-08 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկման ընդհանուր համակարգի շրջա-
նակներում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները
հարկվում են, մասնավորապես, ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, իսկ արտոնագրային
հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով՝
արտոնագրային հարկով,

- 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արտոնագրային հարկի
համակարգի շրջանակներում՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող
գործունեության տեսակների մասով, կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և
(կամ) շահութահարկին փոխարինող արտոնագրային հարկով, իսկ անհատ ձեռնարկա-
տերերը՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող արտոնագրային հարկով:

Հարկային հաշվարկների կազմման և դրանց ներկայացման հետ կապված հարցերը կանոնակարգվում են ՀՀ հարկային օրենսգրքի 9-րդ գլխով, ինչպես նաև հարկման ընդհանուր և հատուկ համակարգերի շրջանակներում գործունեություն իրականացնելու դեպքում ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան մասերով:

Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում բացառապես արտոնագրային հարկ վճարող համարվողի կողմից հարկման ենթակա գործունեության տեսակի (տեսակների) մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի ներկայացման հարցերի հետ կապված՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է նորմատիվ ակտի նախագիծ, որով նախատեսվում է համապատասխան լրացում կատարել միասնական հաշվարկի լրացման կարգում:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ